



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Թիւ 27529

Նոյեմբեր 24, 1981

Մեծայարգ  
Տիար Լէն Մուրադեան  
Ս. Շողակաթ Եկեղեցւոյ  
Ժիական Խորհուրդի Ատենապետ  
Պէլվիլ.

Յարգելի Տիար Մուրադեան,

Այսու գիրով կը յայտնենք թէ համայնքիդ պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորներուն եւ անոնց անձնափոխանորդներուն համար, թեմական Կանոնադրութեան 14-Գ եւ 54 յօդուածներուն համաձայն, եւ 1980 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրատու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ձեր նորընտիր պատգամաւորներուն անունները եւ հասցէները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը Փետրուար ամսուան սկիզբը, որպէս զի կարելի ըլլայ հրաւիրել զիրենք թեմական Պատգամաւորական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 6-8, 1982, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը՝ հիւրընկալութեամբ նիւ Պրիթըն Գընէթիքէթի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ նորընտիր պատգամաւորներուն ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովիւին, Ժիական Խորհուրդի Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրներուն հետ:

Կը ներփակենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմոյշ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Թուական

Այսու գիրով կը հաստատենք որ Տիար կամ Տիկին -----  
հաւատաւոր անդամ է մեր Եկեղեցւոյ եւ ----- 1982ին  
գումարուած Տարեկան Անդամական ժողովի ընթացքին ընտրուած է թեմական  
պատգամաւոր:

-----  
Ժխական Խորհուրդի  
Ատենադպիր

-----  
Ժխական Խորհուրդի  
Ատենապետ

-----  
Հոգեւոր Հովիւ

Date

-----  
This is to certify that \_\_\_\_\_ is a member in good  
standing of the \_\_\_\_\_ Armenian Church; and  
was duly elected a Diocesan Delegate by the General Assembly on  
\_\_\_\_\_.

-----  
Parish Council Secretary

-----  
Parish Council Chairman

-----  
Parish Priest